ՀՏԴ159.9

Հոգեբանություն

Սուսաննա ՓԻԼՈՍՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր,
հոգեբանական գիտությունների թեկնածու
E-mail: pilosyansusanna23@aspu.am

Ռուզաննա ԺԱՄԿՈՅՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս
E-mail: ruzanna_rom84@mail.ru

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ներկայացված են դեռահասների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային բնութագրերի համահարաբերակցության առանձնահատկությունները: Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել և փորձարարական ճանապարհով պարզել՝ որ հոգեբանական պաշտպանական մեխանիզմներն են պատասխանատու անձնային առանձին բնութագրերի պաշտպանության համար դեռահասության տարիքում: Հետազոտության խնդիրներից և նպատակից ելնելով՝ ուսումնասիրել ենք դեռահասների հոգեբանական պաշտպանական մեխանիզմներն ու Ես-ի կառույցի որոշ բնութագրեր, այդ թվում՝ ինքնավերաբերմունքը, ինքնահարգանքը, ինքնահամակրանքը, ինքնաընդունումը, ինքնավստահությունը, ինքնակառավարումը, ինքնահասկացումը, ինքնամեղադրանքը և այլն: Աշխատանքի վերաբերյալ համապատասխան տեսական հիմքերի վերլուծության արդյունքում ընտրված թեստավորման ու հարցարանի մեթոդների կիրառությամբ պարզվել են, որ ուսումնասիրված հոգեբանական պաշտպանական

մեխանիզմներն ակտիվորեն մասնակցում են անձնային առանձին բնութագրերի և Ես-ի կառույցների պաշտպանությանը: Ընդ որում, հոգեբանական տարբական պաշտպանական մեխանիզմներն ավելի շատ են կիրառվում, քան ավելի հասուն հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, որոնք հիմնականում մասնակցում են ինքնակառավարման, դրական ինքնավերաբերմունքի և ինքնահարգանքի պաշտպանությանը:

Բանալի բառեր՝ հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ, մերժում, ռեգրես, կոմպենսացիա, պրոյեկտում, ինքնավստահություն, ինքնահամակրանք, ինքնակառավարում:

С. Пилосян, Р.Жамкоцян

ОСОБЕННОСТИ СООТНОШЕНИЯ ЗАЩИТНЫХ МЕХАНИЗМОВ И ЛИЧНОСТНЫХ ХАРАКТЕРИСТИК ПОДРОСТКОВ

В статье рассматриваются корреляционные особенности психологических защитных механизмов и личностных характеристик подростков. Вытекающие из цели задачи: изучить и экспериментально выявить какие механизмы психологической защиты отвечают за защиту определенных личностных характеристик подростков. Основываясь на задачах и целях исследования, мы изучили механизмы психологической защиты и некоторые характеристики структуры Эго, включая самоотношение, самоуважение, аутосимпатия, самопринятие, самоуверенность, самоконтроль, самопонимание, самообвинение и т.п.

Анализ соответствующей теоретической основ работы с использованием методов тест-анкет и опросников показал, что изученные психологические защитные механизмы активно участвуют в защите некоторых характеристик личности и Эго структур. Кроме того, примитивные механизмы психологической защиты используются больше, чем более зрелые механизмы психологической защиты которые в основном принимая участие в защите самоконтроля, позитивного самоотношения и самоуважения.

Ключевые слова:: психологические защитные механизмы, отрицание, регрессия, компенсация, проекция, самоуважение, аутосимпатия, самоконтроль.

S. Pilosyan, R. Zhamkotsyan

THE FEATURES OF CORRELATION OF ADOLESCENTS' DEFENSE MECHANISMS AND PERSONALITY CHARACTERISTICS

The article discusses the features of correlation of adolescents` defense mechanisms and personality characteristics.

The following issues arise from the purpose of this article: to study and to find out experimentally which psychological defense mechanisms are

responsible for the protection of certain personality characteristics of adolescents. Based on the research problems and purpose we studied psychological defense mechanisms and some characteristics of the structure of Ego including self-attitude, self-respect, auto sympathy, self-acceptance, self-confidence, self-control, self-understanding, self-blame and etc. Analysis of the relevant theoretical foundations of work using the test-questionnaire methods figured out that studied psychological defense mechanisms actively participate in protection of some personality characteristics and the structures of Ego. Besides, primitive psychological defense mechanisms are used more than more mature psychological defense mechanisms which mainly take part in protection of self-control, positive self-attitude, self-respect.
Key words: *psychological defense mechanisms, denial, regression, compensation, projection, self-confidence, auto sympathy, self-control.*

Ներածություն

Հոգեբանական պաշտպանությունը հանդես է գալիս որպես հատուկ կայունացնող համակարգ, որն իր գործունեությունն իրականացնում է անձնավորության օնտոգենետիկ զարգացման ընթացքում ձևավորվող հատուկ մեխանիզմների օգնությամբ: Այս մեխանիզմները անձնավորության գիտակցությունը, անձի *Ես* կերպարը, նրա պատկերացումներն արտաքին աշխարհի վերաբերյալ պաշտպանում են տարբեր բացասական հուզական ապրումներից և ընկալումներից, նպաստում են հոգեբանական հոմեոստազի պահպանությանը, կայունությանը, ներանձնային կոնֆլիկտների լուծմանը և ընթանում են անգիտակցական և ենթագիտակցական մակարդակներում: Ընդ որում, անձնավորության զարգացման սկզբնական շրջանում կիրառվում են բացառապես տարրական պաշտպանական մեխանիզմներ, իսկ զարգացմանը զուգընթաց անձնավորությունը ընդունակ է լինում կիրառել նաև ավելի հասուն պաշտպանական մեխանիզմներ:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, պաշտպանելով անձնավորության Ես-ը, հնարավորություն են տալիս նրան ձևավորվել և զարգանալ, իսկ արդեն զարգացած Ես-ի պաշտպանության համար նախկին պաշտպանական միջոցների անբավարար լինելու և անձնավորության հոգեկան զարգացման արդյունքում անհրաժեշտ է լինում կիրառել նոր ավելի արդյունավետ պաշտպանական մեխանիզմներ:

Օնտոգենետիկ զարգացման ընթացքում ձևավորվում է անձնավորության *Ես* կառույցն իր առանձին բաղադրիչներով, որոնք, բավականաչափ զարգանալով և հասունանալով, իրենց հերթին կարող են կրել պաշտպանական գործառույթ:

Հոգեբանական պաշտպանության ֆենոմենը

«Պաշտպանություն» հասկացությունը Զ. Ֆրոյդը[1] օգտագործել է 1894 թ. իր «Պաշտպանական նեյրոթսիխոզներ» աշխատության մեջ: Պաշտպանությունն, ըստ Զ. Ֆրոյդի, անգիտակցական հոգեկան գործընթացների ամբողջություն է, որոնք կոչված են պաշտպանելու Ես-ը:

Հոգեբանական պաշտպանության ֆենոմենը, առաջին անգամ առաջադրված լինելով հոգեվերլուծական տեսության մեջ, հետագայում ակտիվորեն ուսումնասիրվել է հոգեբանության տարբեր ճյուղերի կողմից:

Հոգեբանական պաշտպանության խնդիրը հոգեբանական գիտության մեջ բավականին շատ է քննարկված գիտնականների կողմից (Զ. Ֆրեյդ[2], Ա. Ֆրեյդ[3], Զ. Բլյում[4], Ռ. Պլուտչիկ[5]): Այնուամենայնիվ, դեռ բավականաչափ ուսումնասիրված չեն հոգեբանական պաշտպանական մեխանիզմների գենեզիսը, զարգացման և դրսևորման օրինաչափությունները, տարբեր են կարծիքները դրանց քանակի և կատարած դերի վերաբերյալ:

Հոգեբանական պաշտպանության գենեզիսի հիմնախնդիրը լուսաբանվում է մասնավորապես *ծնող-երեխա* վաղ հարաբերությունների շրջանակներում: Վ.Վ. Ստոլինը[6], Վ.Ի. Գարբուզովը[7], Ի.Մ Նիկոլսկայան և Ռ.Մ. Գրանովսկայան[8] երեխայի վաղ միջանձնային փոխհարաբերությունները համարում են նրա հետագա հոգեկան զարգացման և սոցիալական ադապտացիայի որոշիչ գործոն, որոնք կանխորոշում են երեխաների մոտ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորումը:

Ե.Տ. Սոկոլովայի[9] կարծիքով՝ պաշտպանական մեխանիզմներն այն առաջնային ներհոգեկան կազմավորումներն են, որոնք երեխայի ինքնադրսևորման սահմանափակման հետևանք են: Դրանց օգնությամբ կայունանում է այսպես կոչված դրական Ես- ֆունկցիան, և թուլանում է այն հուզական կոնֆլիկտը, որը սպառնում է նրա կայունությանը:

Հոգեբանական պաշտպանության և նրանց թեստավորման մեթոդների մշակման մեջ մեծ ներդրում ունի Ռ. Պլուտչիկը: Նրա հիմնական գաղափարը

---

[1] *Տե՛ս* ***Freud S.,*** *The defence nearo-psychoses // The collected Papers: in 10 v. — N.Y.: Collier Books, 1963. v.2. p. 67–81.*

[2] *Տե՛ս* ***Фрейд З.****, Избранное. - М.: Внешторгиздат, 1990, 448 с.*

[3] *Տե՛ս* ***Фрейд А.,*** *Психология "Я" и защитные механизмы, М.: Педагогика-Пресс, 1993. 140 с.*

[4] *Տե՛ս* ***Блюм Дж.,*** *Психоаналитические теории личности / Пер. с англ., вступ. ст. А.Б. Хавина, М.: Академический проект; Екатеринбург: Деловая книга, 1999, 222 с.*

[5] *Տե՛ս* ***Plutchik R., Kellermann H., Conte H.R.,*** *A structural theory of ego defences and emotions // Isard C.E. (ed.) Emotions in personality and psychopathology. - N.Y.: Plenum, 1979, p.229-257.)*

[6] *Տե՛ս* ***Столин В. В.,*** *Самосознание личности. М., МГУ 1983,- 286с. с. 33-34.*

[7] *Տե՛ս* ***Гарбузов В.,*** *Нервные и трудные дети/ - М.:АСТ; СПб: Астрель - СПб, 2006, 351 с.*

[8] *Տե՛ս Психология современного подростка. Под ред. Д.И. Фельдштейн, М., Педагогика, 1987, 240с, с.12-14.*

[9] *Տե՛ս* ***Соколова Е. Т.,*** *Феномен психологической защиты (при поддержке РФФИ, грант №05-06-80240) // Вопросы психологии, 2007, № 4, с. 66–79.*

կայանում է նրանում, որ հոգեբանական պաշտպանական մեխանիզմները հանդիսանում են հույզերի արդյունք, իսկ հույզերը սահմանվում են որպես ադապտացիայի հիմնական միջոցներ: Բացի այդ, նա ընդգծում է, որ հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, ինչպես հույզերը, բնութագրվում են հակադրությամբ (ուրախություն-թախիծ, վախ-զայրույթ, ընդունում-զզվանք, սպասում-զարմանք): Այսպիսով, 8 հիմնական մեխանիզմները նա դարձնում է 4 զույգ՝ հակազդեցության ձևավորում-կոմպենսացիա, ճնշում-փոխարինում, մերժում-պրոյեկցիա, ինտելեկտուալի-զացիա-ռեգրես: Քանի որ հոգեբանական պաշտպանական մեխանիզմները հույզերի արդյունք են, ուստի դրանք հույզերի նմանությամբ դասակարգվում են հիմնականի՝ մերժում, արտամղում, ռեգրես, կոմպենսացիա, պրոյեկցիա, փոխարինում, ինտելեկտուալիզացիա, հակազդեցության ձևավորում, և երկրորդականի, որոնց թվին են պատկանում մնացած բոլորը:

Փորձարարական հետազոտություն

Մեր հետազոտության շրջանակներում ուսումնասիրել ենք պաշտպանական մեխանիզմների և Ես-ի բաղադրիչներ հանդիսացող որոշ անձնային բնութագրերի միջև համահարաբերակցային կապեր՝ պարզելու համար, թե պաշտպանական որ մեխանիզմներն են պատասխանատու անձնային առանձին բնութագրերի պաշտպանության համար:

Հետազոտությանը մասնակցել են 14-15 տարեկան 40 դեռահասներ: Ընտրակազմի ընտրությունը պայմանավորված է հետազոտվողների տարիքային առանձնահատկությամբ, դեռահասության ճգնաժամով: Ենթադրվում է, որ դեռահասության ճգնաժամի ընթացքում պաշտպանական մեխանիզմներն ավելի շատ են կիրառվում ճգնաժամը հաղթահարելու համար: Հետազոտության անցկացման համար օգտագործել ենք Ռ. Պլուտչիկի *Կյանքի ոճի ինդեքս* մեթոդիկան[1] և Վ.Վ. Ստոլինի Ինքնավերաբերմունքի հարցարանը:[2] Ստացված տվյալները ենթարկել ենք երկրորդային մշակման՝ կիրառելով մաթեմատիկական վիճակագրային վերլուծություն (ըստ՝ Պիրսոնի բանաձևի):

Վերլուծության արդյունքում դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել մերժման և սեփական Ես-ին կողմ լինելու միջև ($P \leq 0,05$, երբ $r=0.313$): Նման կապը նույնպես ենթադրում է, որ դեռահասի կողմից մերժվում է այն ինֆորմացիան, որը հակասում է սեփական Ես-ի մասին դրական պատկերացումներին և վերաբերմունքին:

---

[1] Տե՛ս **Вассерман Л.И. Ерышев О.Ф., Клубова Е.Б.**, *Психологическая диагностика индекса жизненного стиля. - Спб.: Издательство: СПбНИПНИ им. В.М.Бехтерева, 2005, 50 с.*

[2] Տե՛ս **Столин В.В., Пантилеев С.Р.,** *Опросник самоотношения // Практикум по психодиагностике: Психодиагностические материалы. М., 1988. с. 123-130.*

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել ինքնավստահության և մերժման միջև (P≤0,05, երբ r=0.308): Ցանկացած երևույթ կամ ինֆորմացիա, որը հակասում է նրա սեփական Ես-ի մասին դրական պատկերացմանը, դեռահասի կողմից մերժվում է: Դա հանգեցնում է նրան, որ դեռահասը աչքի է ընկնում ինքնավստահությամբ, որը ոչ միշտ կարող է արդարացված լինել: Մերժման և ինքնաընդունման միջև դրական համահարաբերակցային կապը (P≤0,05, երբ r=0.299) նույնպես պայմանավորված է մերժման առանձնահատկությամբ, որը դեռահասի գիտակցության մեջ թողնում է միայն այն ինֆորմացիան, որը նպաստում է դեռահասի ինքնահարգանքին և ինքնաընդունմանը:

Համահարաբերակցային դրական կապ է բացահայտվել արտամղման և ինքնահարգանքի միջև (P≤0,05, երբ r=0.346): Արտամղման միջոցով դեռահասը պաշտպանվում է ինքնահարգանքին վնասող կամ սպառնացող ինֆորմացիայից: Դեռահասի ինքնահարգանքի և ինքնագնահատականի ձևավորման գործում արտամղման նշանակությունը մեծ է, քանի որ արտամղման շնորհիվ գիտակցություն է հասնում միայն այն ինֆորմացիան, որը բարձրացնում է դեռահասի ինքնահարգանքն ու ինքնագնահատականը: Արտամղման և ինքնավստահության միջև դրական համահարաբերակցային կապը (P≤0,05, երբ r=0.328) բացատրվում է դեռահասի կողմից այն ինֆորմացիայի արտամղմամբ, որը սպառնում է իր մասին ունեցած դրական պատկերացումներին և գնահատականներին, որոնց շնորհիվ դեռահասն ինքնավստահ է զգում:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել ռեգրեսի և սեփական Ես-ին կողմ լինելու (P≤0,05, երբ r=0.312), ինքնահարգանքի (P≤0,05, երբ r=0.321), ինքնահամակրանքի (P≤0,05, երբ r=0.314), ինքնահետաքրքրվածության (P≤0,05, երբ r 0.336), ինքնակառավարման (P≤0,05, երբ r=0.332) միջև:

Դեռահասի կողմից *ռեգրես* պաշտպանական մեխանիզմ հաճախ է կիրառվում: Այս տարիքում անձն առավելապես պաշտպանվում է ինքնահարգանքին և ինքնահամակրանքին սպառնացող բացասական ինֆորմացիայից: Ռեգրեսի արտաքին դրսևորումն արտահայտվում է ավելի փոքր տարիքին համապատասխանող վարքին վերադառնալով, որը նպաստել է դժվար պահին հոգուտ իրեն խնդիրների լուծմանը: Արտաքին դրսևորումներից են նաև մեկուսանալն ու ինքնամփոփ դառնալը: Նման դրսևորումը վկայում է ուրիշներից շփման սպասման և ռեգրեսի միջև (P≤0,05, երբ r=0.297) բացասական համահարաբերակցային կապը:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել կոմպենսացիայի և դեռահասի անձնային կառույցներից ինքնահարգանքի (P≤0,05, երբ r=0.336), ինքնահամակրանքի (P≤0,05, երբ r=0.324), ուրիշներից դրական վերաբերմունքի սպասման (P≤0,05, երբ r=0.328), ինքնակառավարման միջև (P≤0,05, երբ r=0.332):

Դեռահասը իր իրական կամ թվացյալ թերություններից ազատվելու, դրանց կողմից առաջացած անկարողության, անպաշտպանության տագնապից

ազատվելու համար կոմպենսացիա է կիրառում: Կոմպենսացիայի հաջող փորձի արդյունքում բարձրանում է դեռահասի ինքնահարգանքը և ինքնահամակրանքը, որի արդյունքում նրա մոտ աճում է նաև ուրիշներից դրական վերաբերմունքի սպասումը: Կոմպենսացիան ենթադրում է նաև կամային և մտավոր գործընթացներ, որոնց արդյունքում դեռահասի ինքնակառավարման մակարդակը նույնպես բարձրանում է: Բացի այդ՝ կոմպենսացիա կիրառելու համար նախ անհրաժեշտություն է առաջանում կամային ջանքերի շնորհիվ զսպել և հաղթահարել անպաշտպանության և անկարողության զգացման կողմից առաջացած տագնապը, քանի որ միայն դրանից հետո հնարավոր կլինի մտավոր արդյունավետ գործընթացներ իրականացնել: Կոմպենսացիան համարվում է ավելի հասուն պաշտպանական մեխանիզմ: Մեր հետազոտության տվյալները վկայում են, որ կոմպենսացիան դրական համահարաբերակցային կապերով է կապված ինքնագիտակցության բոլոր այն կառույցների հետ, որոնք սկսում են ձևավորվել և զարգանալ հենց դեռահասության տարիքում: Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ կոմպենսացիան՝ որպես ավելի հասուն պաշտպանական մեխանիզմ, կիրառվում է հենց հասուն անձնավորության ինքնագիտակցության կառույցների պաշտպանության համար:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել պրոյեկցիայի և սեփական Ես-ին կողմ լինելու միջև (P≤0,05, երբ r=0.305): Պրոյեկցիան ենթադրում է սեփական բացասական որակների վերագրում այլ անձի: Հետևաբար՝ պրոյեկցիայի կիրառմամբ անձը ազատում է սեփական Ես-ին բացասական որակներից, և սեփական Ես-ը ներկայացվում է դրական որակներով:

Պրոյեկցիան դրական համահարաբերակցային կապ ունի նաև ուրիշներից դրական վերաբերմունքի սպասման հետ (P≤0,05, երբ r=0.322): Նման կապը բացատրվում է նրանով, որ վերագրման միջոցով ազատվելով բացասական որակներից և դրանք այլ անձի մոտ քննադատելով՝ դեռահասը շրջապատողներից դրական վերաբերմունք է ակնկալում:

Նման կերպ կարելի է բացատրել նաև ինքնահամակրանքի և պրոյեկցիայի միջև համահարաբերակցային կապը (P≤0,05, երբ r=0.307): Վերագրման շնորհիվ ազատվելով բացասական որակներից և թերություններից, դեռահասի ինքնահամակրանքն աճում է:

Փոխարինումը համարվում է տարրական պաշտպանական մեխանիզմ և կիրառվում է դեռևս փոքր տարիքից: Դեռահասների մոտ կատարված հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ փոխարինումը դրական համահարաբերակցային կապի մեջ է ինքնահարգանքի (P≤0,05, երբ r=0.365) և ինքնավստահության հետ (P≤0,05, երբ r=0.319): Բացասական հույզերն արտահայտելու համար ավելի թույլ օբյեկտ ընտրելով՝ դեռահասը պաշտպանում է իր իսկ ինքնահարգանքն ու ինքնավստահությունը: Ինքնահարգանքի ու ինքնավստահության աճին նպաստում է նաև ապակառուցողական ինքնահաստատման միջոցով դրսևորվող փոխարինումը:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել սեփական Ես-ին կողմ լինելու և ինտելեկտուալիզացիայի միջև (P≤0,05, երբ r=0.315): Դեռահասների մոտ ինտելեկտուալիզացիայի հաճախակի կիրառումը Վ.Վ. Դելարյուն[1] համարում է դեռահասի սոցիալական կապերի անբավարարության արդյունք: Սոցիալական սակավաթիվ կապեր ունեցող դեռահասը մեկուսանում է շրջապատից, դառնում ինքնամփոփ: Ինտելեկտուալիզացիայի և սեփական Ես-ին կողմ լինելու միջև համահարաբերակցային կապը վկայում է դեռահասի՝ սեփական անձով հետաքրքրված լինելով, սեփական անձի մասին առավել հաճախ մտածելով: Բացի այդ, դեռահասության տարիքում, ինտելեկտուալ գործընթացների զարգացմանը զուգընթաց, ձևավորվում է ինտելեկտուալիզացիան՝ որպես պաշտպանական մեխանիզմ և, ի տարբերություն տարրական պաշտպանական մեխանիզմների, սկսում է կոգնիտիվ մակարդակում արդեն պայքարել առաջացած տագնապի և լարվածության դեմ:

Հակազդեցության ձևավորման և ինքնակառավարման միջև բացահայտված դրական կապը (P≤0,05, երբ r=0.325) կարելի է բացատրել հենց *հակազդեցության ձևավորում* պաշտպանական մեխանիզմի առանձնահատկությամբ: Այս մեխանիզմը ենթադրում է առաջացած հակազդեցության զսպում և դրա փոխարեն հակառակ հակազդեցության դրսևորում: Հետևաբար՝ դեռահասի զարգացած ինքնակառավարման շնորհիվ *հակազդեցության ձևավորում* պաշտպանական մեխանիզմն առավել արդյունավետ է գործում:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դեռահասության տարիքում բոլոր հետազոտված պաշտպանական մեխանիզմներն ակտիվորեն մասնակցում են անձնային որոշ բնութագրերի պաշտպանությանը: Սակայն ուրիշներից դրական սպասումների, սեփական Ես-ին կողմ լինելու, ինքնավստահության, ինքնահամակրանքի և ինքնաընդունման համար կիրառվում են առավելապես տարրական պաշտպանական մեխանիզմները, իսկ ավելի հասուն պաշտպանական մեխանիզմները մասնակցում են անձնավորության ինքնահարգանքի, ինքնակառավարման պաշտպանությանը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը:

[1] *Տե՛ս Защитные механизмы личности: Методические рекомендации /Сост. проф. В.В.Деларю. Волгоград: 2004, с. 11.*